

**ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ**


**ԱՂՕԹՔԻ ՉՕՐՈՒԹԻՒՆԸ**

Բաւ է, որ արտասուալից պաղատանով աղօթես Աստուծոյ եւ դուն պիտի թեթեւնաս ամբարշտութեան ցաւէն, պիտի բժշկուիս անօրէնութեան վիշտէն ու պիտի բժշկուիս օրինազանցութիւններու հիւանդութենէն: Բաւ է, որ ամբողջական սրտով աղօթես Աստուծոյ եւ դուն սատանայի որոգայթներէն եւ չարածանիք վիշապի ակոսներէն պիտի փրկուիս եւ ձերբագատիս թշնամիին թոյնէն եւ վերագտնես առողջութիւնդ: Բաւ է, որ յարատեւ աղօթքներով թախանձես Աստուծոյ: Ան պիտի լուսաւորէ մոլորութեանդ խաւարը, պիտի ցամփեցընէ եւ անհետացնէ պիղծ մեղքերու աղտոտութիւնը եւ ցանկութեան տիղմը: Եթէ անխարդախ հաւատով ու սրտովիմ աղօթես Աստուծոյ, մեղքերուդ համար թողութիւն եւ օրինազանցութիւններուդ համար քաղութիւն կը ստանաս եւ կը ժառանգես երկինքի արքայութիւնը եւ իր անսահման բարութիւնը, կը ստանաս մահիկնի առողջութիւն եւ հոգիի փրկութիւն, կ'ունենաս ուրախ օրեր, խաղաղ կեանք, հեռու բոլոր զրպարտողներէ: Աղօթքը բունակալներու բարկութեան ալիքները կը գսպէ, Աստուծոյ բարկութիւնը կը մեղմէ, աղփատները կը հարստացընէ, տկարները կը զօրացնէ, հիւանդները կը բուժէ, կատաղի մոլորութիւնները ետ կը մղէ, ամուլը ծնելու ատակ կը դարձնէ, անգաւակը բազմածին կ'ընէ, ծովուն ալիքներէն եւ գետի յորձանքներէն կը փրկէ, անօրինները կը կերակրէ, մերկները կը զգեստաւորէ, կանխահաս մահերը կ'արգիլէ ու բոլորին փափաքները կը կատարէ՝ եթէ երբեք հաւատով աղօթես:

ՄԻՇՏ ԱՂՕԹԵՆՔ

**ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ**

**ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳ**



**ՊԱՏԱՐԱԳԻ ԽՈՐՀՈՐԴԻՆ ՀԱՅՏԱՆՈՒՄԸ**  
**2.- Պատրաստութիւն ընծաներուն**  
**Գ.- ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ ՀԱՄԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ**

Հօր Աստուծոյ ընծայում երախտագիտական օրհներգութենէն ետք, երբ Որդի Աստուծոյ պատարագումը արդէն իսկ իրագործուած է, դպիրները այս անգամ իրենց աղերսանքը կը ներկայացնեն Ս. Երրորդութեան երրորդ անձնաւորութեան՝ Ս. Հոգի Աստուծոյ. «Հոգի՛ Աստուծոյ, դուն՝ որ երկինքէն կ'իջնես մեր ձեռքերով իր լուսնին հասնելու համար քեզի փառակից Որդիին պատարագումի Խորհուրդը: Անոր թափած արեան միջնորդութեամբ կ'աղայնէ՛ք քեզի, հանգի՛ստ պարգեւէ մեր անջեցեալներու հոգիներու»:

Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ ճառագայթող ներկայութիւնը իր լրումնի կը հասցնէ Ս. Պատարագի Խորհուրդը: Հոգեւոր այս ցնծութեան մէջ, երբ երկինքն ու երկիրը կամբջուած են, Յաղթական եկեղեցին կու գայ միանալու շնչոյ, քրիստոնէական հաւատքով ապրող Ջինուորեալ եկեղեցոյ: Եկեղեցին իր ամբողջութեան մէջ պէտք է տօնախմբէ Աստուածորդոյն Ս. Պատարագը...

Շարունակելի



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ



ՔՈՒ ԽՕՒՔԻ ԽՄ ՈՏՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ՃԷ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 22 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2024 ԹԻՒ 38

**ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԵԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**  
**Առ 3.18-26: Ես 65.22-25: Գղ 6.14-18: Ստ 24.30-36**

**ՏՕՆ ՎԱՐԱԳԱՅ ՍՐԲՈՅ ԽԱԶԻՆ**  
**ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐԵՏԱՐԱՆԸ**  
**ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ**  
**24.30-36**

Ապա մարդու Որդիին նշանը պիտի երեւի երկինքի մէջ եւ աշխարհի բոլոր ժողովուրդները պիտի ողբան, երբ տեսնեն մարդու Որդին, որ կու գայ երկինքի ամպերուն վրայ բազմած զօրութեամբ եւ մեծ փառքով: Երբ մեծածայն փողը հնչէ, ան իր հրեշտակները պիտի դրկէ, որպէսզի հաւաքեն իր ընտրեալները աշխարհի չորս կողմերէն, երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւսը: Թ՛գեմին թող ձեզի օրինակ ըլլայ: Երբ տեսնէք, որ անոր ճիւղերը կը կակուղնան եւ տերեւ կ'արձակեն գիտէք, թէ ամառը մօտ է: Նոյնպէս այլ, երբ բոլոր ըսածներս կատարուին գիտցէք, թէ մարդու Որդիին գալուստը մօտ է: Վստահ եղէ՛ք, որ այս սերունդը չանցած՝ ասոնք բոլորը պիտի պատահին: Նոյնիսկ, եթէ երկինքն ու երկիրը անհետանան, իսօսքերս պիտի չանհետանան:

**Սակայն ոչ ոք գիտէ, թէ երբ պիտի գայ այդ օրը կամ ժամը: Ո՛չ երկինքի հրեշտակները, ո՛չ իսկ Որդին, բայց միայն Հայրը:**

**Ո՛ջ ոք գիտէ, թէ ե՛րբ դիժի գայ այդ օրը կամ ժամը: Ո՛ջ երկինքի Հրեշտակները, ո՛չ իսկ Որդին, բայց միայն Հայրը:**

Մեզմէ կը պահանջուի սիրելի հաւատացեալ ընթերցող արթուն եւ պատրաստ ըլլալ, ինչպէս Յիսուս կ'ըսէ: Արթուն եւ պատրաստ ըլլալ հոգիով, աղօթքի ճամբով: Ամենօրեայ աղօթքը կարելոր անհրաժեշտութիւն է, հոգեւոր սնունդ է: Ինչպէս մեր մարմինը նիւթական սնունդի կարիքը ունի, նոյնպէս մեր հոգին հոգեւոր սնունդի՝ հացի կարիքը ունի: Ամենօրեայ աղօթքն է այդ հոգեւոր հացը, որուն միջոցաւ մեր հաւատքը կը զօրանայ եւ այն ատեն մենք արթուն եւ պատրաստ պիտի ըլլանք դիմաւորելու Տէրը:

# ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

## ՎԱՐԱԳՎԱԾ ՍՈՒՐԲ ԽԱԶ

\*\*\*\*\*

Ըստ եկեղեցւոյ աւանդութեան, սուրբ Հոռիփսիմեանց կոյսերը Դիոկղետիանոս կայսեր (243-31) կողմէ կը հալածուին կու գան Հայաստան եւ կ'ապաստանին Վարազայ լեռան լանջին: Սուրբ Հոռիփսիմէ իր վիզին կը կրէր Քրիստոսի խաչափայտէն մասունք մը, որ ստացած էր ժառանգաբար Կլավտիոս կայսեր տիկնոջ՝ Պատրոնիկէ քագուհիին կողմէ:

Հայաստանի մէջ Հոռիփսիմեանց կոյսերը հալածանքի կ'ենթարկուին եւ այդ պատճառով ալ Սուրբ Հոռիփսիմէն իր խաչը կը պահէ Վարազայ լեռան մէկ քարայրին մէջ: Հայաստանի մէջ միշտ գիտէին, թէ այդ խաչը պահուած է Վարազայ լեռան վրայ, բայց չէին գիտեր՝ թէ ուր:

653 թուին այդ լեռան վրայ իրենց նգնութիւնը կ'ընեն Թողիկ նգնաւորը եւ իր աշակերտը՝ Հովել, որն ի բուն աղօթելով եւ խնդրելով Աստուծմէ, որ ձեւով մը Աստուած իրենց յայտնէ Խաչին վայրը: Հայր Աստուած, որ միշտ կ'ուզէ զինք հաւատացողներուն խնդրանքները իրականացնել, օր մը լոյսի տեսիլով 12 սիւներու մէջտեղէն վեր կ'անջատէ Սուրբ Նշանը՝ խաչը, որ կու գայ դէպի սուրբ խորանը, ուր կ'աղօթէին երկու նգնաւորները: Նոյն ատեն կը լսուի ձայն մը, որ կ'ըսէ. «Քրիստոս հանեցաւ բնակիլ Սուրբ Խաչին մէջ, ի պահպանութիւն եւ փրկութիւն հայոց աշխարհին»:

Լուսեղէն սիւները 12 օրեր շարունակ կ'երեւին Վարազայ լեռան Գալիլիա կոչւող գագաթին վրայ այնպէս մը, որ ամէն մարդ կրնար տեսնել զանոնք:

Հոգեւորականներ եւ իշխաններ, հայոց Ներսէս Գ. Տայեցի կաթողիկոսի եւ Ռշտունեաց Վարդ Ռշտունի սպարապետի գլխաւորութեամբ կու գան Վարազ՝ սուրբ Խաչին երկրպագելու: Ներսէս հայրապետը սուրբ Խաչի երեւումը տօն կը հռչակէ, 12 լուսեղէն սիւներու երեւցած տեղը եկեղեցի կը շինէ եւ ուր, որ իջած էր սուրբ Խաչը կը մեծցնէ եւ աւելի փառաւոր կը կառուցէ:

Այս առիթով կը գրուի, նաեւ «Նշանաւ ամենայաղօ խաչիւղ քով Քրիստոս» շարականը եւ մինչեւ Վարազայ սուրբ խաչի տօնը կը սահմանուի 5 օրեայ շաբաթապահք, որ ժողովրդական լեզուով կը կոչուի «Վանեցիներին»:

Վարազայ լեռան գագաթին եւ ստորոտին կը հիմնուին վերին եւ ներքին եկեղեցիները, որոնցմէ աւելի ծանօթ է ներքին Վարազավանքը, ուր կը պահուէր խաչափայտի մասունքը մինչեւ 1021, երբ Սենեքերիմ Արծրունի Վասպուրականի քագաւորութիւնը կը յանձնէ Բիւզանդիոսին, կը տեղափոխուի Սեբաստիա եւ իր հետ կը տանի նաեւ սուրբ Նշանը, սակայն քիչ ետք 1026-ին սուրբ Նշանը կը վերադարձուի Ներքին Վարազավանք: 11-րդ դարուն, Աշոտ Գ. Բագրատունի սուրբ Նշանին համար շինելու տայ ոսկեայ տուփ մը եւ 1237-ին կը տեղափոխուի նոր Վարազավանք: Ասկէ ետք 1651-ին կը տարուի Խոշար, 1655-ին կը դրուի Վանի սուրբ Տիրամայր եկեղեցւոյ մէջ, որուն պատճառաւ ալ եկեղեցին կը վերանուանուի Սուրբ Նշան անուանով: Մաղափիա Օրմանեան պատրիարքը (1841-1918) իր «Ծիսական բառարան»-ին մէջ կը վկայէ, որ իր օրով սուրբ խաչը տակաւին կը մնար Վանի Սուրբ Նշան եկեղեցւոյ մէջ, սակայն Մեծ Եղեռնէն ետք անոր գտնուած վայրը անյայտ է:

Սուրբ Խաչին կը վերագրուին բազմաթիւ հրաշքներ, մանաւանդ Եղեւսիոյ համաճարակի ժամանակ, երբ Վարազայ Սուրբ Խաչի գօրութեամբ կանգ առած է համաճարակը:

Ագաթանգեղոսի վկայութեամբ, հայոց երկնակամարին վրայ լուսեղէն սուրբ խաչը երեւցած է, նաեւ սուրբ Գրիգոր Լուսաւորիչի, ինչպէս նաեւ սուրբ Մեսրոպ Մաշտոցի յուղարկութեան ժամանակ Վաղարշապատէն մինչեւ Օշական՝ ըստ Մովսէս Խորենացիի վկայութեան:

Վարազայ Սուրբ Խաչը կը տօնուի Խաչվերացէն 15 օր ետք, այսինքն Սեպտեմբեր 25-էն մինչեւ Հոկտեմբեր 1-ի գուգադիպող Կիրակի օրը:

# ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ

## ՈՐՈՂԵՔ ԿՐՆԱՆ ՏԵՍՆԵԼ ՎԻՐԱՒՈՐ ՄԱՐԴԻԿ

«Տեսաւ վիրաւորը եւ գթաց անոր» (Ղկ 10.33): Յիսուս տեսաւ որ մեղքը վէրք յառաջ բերած էր մարդուն սրտին մէջ: Ի՞նչպէս տեսաւ:

Ան որուն հոգիին այժեքը բաց են՝ ա՛հն միայն կրնայ տեսնել մեղքով խոցոտուած մարդիկը եւ գթայ անոնց: Մեղքի տիղմին մէջ թաւայող մարդը չի կրնար անդրադառնալ մեղքի կործանարար ներկայութեան:

Մեղքէն ազատագրուելէ ետք միայն կրնանք գիտնալ թէ որքան տգեղ բան է մեղքը:

### ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ:

Սիրելի ընթերցող, դուն կրցա՞ծ ես դուրս գալ մեղքի եւ մթութեան անդունդէն ու բարձրանալ դէպի լուսաւոր Թաքոր լեռը: Եթէ յաջողած ես այդ լեռը բարձրանալ, հոնկէ միայն կրնաս տեսնել մեղքի խաւարին մէջ խարխափող մարդիկը: «Տեսաւ վիրաւորը»: Դուն չես կրնար տեսնել վիրաւորը եթէ դուն ինքդ վիրաւոր մըն ես: «Եւ գթաց անոր»: Դուն չես կրնար գթալ ուրիշին եթէ դուն ինքդ անգութ ես դուն քու անձիդ հանդէպ: Եթէ դուն քու հոգիիդ չես խղճար՝ անկարելի է որ խղճաս ուրիշին հոգիին:

### Ա.ՍՏՈՒ.Ա.Մ.Ա.ՇՈՒՆՁԸ

«Երբ բանաս սուրբ Աւետարանը ընթերցելու համար յիշէ, որ ան է, որ պիտի որոշէ քու յաւիտեանկան վիճակդ: Անով է, որ պիտի դատուիմք: Այստեղ անոր նկատմամբ մեր ունեցած վերաբերմունքին համեմատ պիտի հատուցուի մեզի կա՛մ յաւիտեանկան երանութիւն եւ կա՛մ յաւիտեանկան պատիժ»:

Իգնատի Բրեանչանինով

# ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ ԿՈՒՁԵՍ...

## ԵՐԲ ՀՈԳԻՎ ԽՈՌՈՎԱԾ ՈՒ ԱԼԵԿՈՑ Է ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԿԸ ՓՆՏՈՒՄ, ԿԱՐԴԱ՝ ՍԱՂՄՈՍ 62

Միայն Աստուծո՛վ հոգիս հանգիստ կը գտնէ, անկէ՛ կու գայ փրկութիւնս: Միայն ա՛ն է ապաստանս եւ փրկութիւնս, ա՛ն է իմ ապաւէնս, բնաւ պիտի չսասանիմ: Դուք՝ ո՛վ մարդիկ, մինչեւ ե՞րբ վրաս պիտի յարձակիք, պիս խորտակելու համար՝ խախտած պատի պէս, փլելու վրայ եղող ցանկապատի պէս: Միայն կը խորհիք պիս տապալել բարձրութենէս, հաճոյք կ'առնէք ստութենէն, բերնով կ'օրհնէք, բայց ձեր միտքէն անէծք կու տաք:

Միայն Աստուծո՛վ ես հանգիստ կը գտնեմ, ա՛ն է որ յոյս կու տայ ինծի: Միայն ա՛ն է ապաստանս եւ փրկութիւնս, ա՛ն է իմ ապաւէնս, եւ ես պիտի չսասանիմ: Աստուծմէ կախում ունին փրկութիւնս եւ փառքս: Ա՛ն է ամուր միջաբերդս: Ես Աստուծոյ կ'ապաւինիմ: Անո՛ր վստահեցէք միշտ, ո՛վ ժողովուրդ, անո՛ր դիմաց պարպեցէք ձեր սիրտը: Աստուած է մեր ապաւէնը: Բոլոր մարդիկ շունչ մըն են պարզապէս: Ռամիկ թէ ալ նուական՝ խաբկանք են, ուրիշ ոչի՛նչ: Կշիռքի մէջ, որ դրուին՝ միասնաբար ոչինչէն ալ նուազ են: Հարստութեան մի ապաւինիք, յափշտակուած բաներով մի՛ հպարտանաք նոյնիսկ, եթէ ձեր հարստութիւնը բազմապատիկ ըլլայ, ձեր սիրտը անոր չըլլայ, որ կապէք: Աստուած ինք յայտարարեց եւ քանիցս ես լսեցի՝ թէ պօրութիւնը Աստուծոյ կը պատկանի: Այո, ո՛վ Տէր, ողորմութիւնն ալ բուկդ է, որովհետեւ իւրաքանչիւրին կը յատուցանես իր գործերուն համաձայն: